ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2018 թվականի N 19-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1739-Ա որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի 2018 թվականի հունվարի 29-ի N 2099-18 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին ամրացված երեք միավոր տրանսպորտային միջոցների *(ՎԱԶ-21214, ՎԱԶ-21074 և ՎԱԶ-2106)* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը ապահովելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) ***Լադիկ Նահապետյան*** - հանձնաժողովի նախագահ - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,

2) ***Մհեր Եղիազարյան*** - հանձնաժողովի անդամ - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

3) ***Արփյուշ Պետրոսյան*** - հանձնաժողովի անդամ - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,

4) ***Մանվել Պետրոսյան*** - հանձնաժողովի անդամ - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

5) ***Մարտուն Պողոսյան*** - հանձնաժողովի անդամ - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2018 թվականի հունվարի 30
ք. Հրազդան